

Եկեղեցւոյն Հայերէն Աբխազերէններն՝ որք ցայժմ անվճար կը մնան կ'ըսուի, եւ զորս յամին 1877 Յունուար 24ին Կ.Պոլսոյ Մանչիւրիէի Եփեսոս պատուական թերթը, Զմիւռնիոյ Աբխազ Աբխազերէն առնելով հրատարակեց, (թ. 3369) կարեւոր կը համարինք զնել այստեղ, իբր լուսատու Մարտէյի թանգարանին հայ արձանագրութեան:

« Եկեղեցւոյ ներքին դրան ճակատը գրուած էր, կ'ըսէ Աբխազի նամակագիրը, հետեւեալը՝ զոր կը նշանակեմք առանց կէտ մի այլայլութեան:

ՎԵՐԱՆՈՐՈՎԵՑԱԻ ԳՈՒՌՈՍ Ի ԹՈՒՌՅ ՓՐԿՉԻՆ
 1749 ՀԱՆԳԵՐԶ ԱՅՆԱՅՈՒՅՄԱՄԻ ԳԱԹԻՆ
 ԵՒ ՄԱՐԱՐՈՆԵԱ ՍԱԼԱԿԱՊԻՒ ԸՆԴ ՈՐՄՈՅՆ
 ԵՒ ԳԵՂԵՑԿԱՊԻՍ ԵՒ ԱՊՄԱՄԻ ԱՌԱՍԱԳԻՆ
 ԱՐԳԵԱՄԻ ԶՈՒՂԱՅՆՅՈՒՅ ՏԵՐ ԱՌԱ-
 ՔԵԼԻՆՅ ՊՕՂՈՍԻՆ ՈՐԳԻ ՊԱՐՈՆ ԱՌԱ-
 ՔԵԼԻՆ, ՅԻՇԱՏԱԿ ԻՐԻՆ ԵՒ ԶԻՐԻՆ ՀԱՆ-
 ԳՈՒՅԵԱԼ ԵՒ ՆՈՂ ԶՀՕՐԻՆ ՊՕՂՈՍԻ,
 ՈՐԳԻ ՊԱՐՈՆ ԱՌԱՔԵԼԻՆ, ՅԻՇԱ-
 ՏԱԿ ԻՐԻՆ, ԶԻՐԻ ՀԱՆԳՈՒՅԵԱԼ
 ԵՒ ՆՈՂ ԶՀՕՐԻՆ ՊՕՂՈՍԻ ԵՒ ԶԿԵՆԴԱՆԻ
 ՄՕՐԻՆ ՎԱԼԻԳԱՅԻՆ

« Իսկ եկեղեցւոյ արտաքին դուռը բաւական փառաւոր տեսք ունի, գեղեցիկ մարմարեայ քարերով շինուած եւ բաց ի հայերէն յիշատակագրութենէ՝ գտանի նաեւ դրան ճակատը Գառն Աստուծոյ մի գրօշակաւ, եւ սուրբ Գրոց վերայ հաստատեալ. նաեւ փառաւոր խաչ մի մէջտեղն, եւ այսպէս գրած, ' Ամի 1714;: Այս դրան վրայ եւս հետեւեալ յիշատակագրութիւնը կը գտնուի:»

ՎԵՐԱՍԻՆ ՆՈՐՈՎԵՑԱԻ ԳՈՒՌՈՍ Ի ԹՈՒՌՅ
 ՀԱՅՈՅ Ռ. Ը. Ղ. Ը.
 ՀԱՆԳԵՐԶ ԱՍՏԻՃԱՆՕՔ ՎԵՐԻՆ ԵՒ ՆԵՐՔԻՆ
 ԱՌՈՍԱՄՏՕՔ
 ԵՒ ԱՌԱՐԻՔ Ի ՍՈՅՆ ՍՈՒՐԻ ՀՈՎԻ ԵԿԵՂԵՑԻՈՅ
 ՍՊԱՍԱՌԻ,
 ՄԻՆԱՍԻ ՈՐԳԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԻ ՎԱՐԳԱՊԵՏԻ
 ԱՄԱՍԱՅԻՈՅ
 Ի ՎԵՇԱՍԱՆ ԵՐՐՈՐԴՈՒՄ ԱՄԻ ՍՊԱՍԱՌ-
 ԲՈՒԹԵԱՆ
 ԻՐՈՅ ՅԻՇԱՏԱԿ ԻՐԻՆ ԵՒ ԶԻՐԻ ՆՆՁԵՑԵԱԼ
 ԵՒ ՆՈՂԱՅՆ:

Մարթ է անթաց աչքը կարդալ սոյն յիշատակարանները, եւ անորմոք յիշել վաճառու մը սոյն եկեղեցւոյն, ուր դարեր յառաջ կը խմբուէր հայութիւն մը՝ որ ազգային սպագրութեան գրեթէ մայրն եղած է ի ձեռն Ծարեցի

Մատթէոս սարկաւազի, եւ վաճառական Աւետիաի եւ մանաւանդ Անդրիանեցի Կարապետ վարդապետի՝ որ յամին 1662 Ամեղեքտամի մէջ Ժամբոյ սպագրութիւնն բաւ:

Մարտէյի թանգարանին հայ արձանագրութեան մէջ կարդացուած « Կարապետ բանին սպասաւոր »ը, կ'երեւայ ժամագրոց սպագրիչ Կարապետ վարդապետն է:

ՏՐ. ՎԱՅՐԱՄ Յ. ԹՈՐԳՈՍԵԱՆ



ՏՓՂԻՍԻ ԱՄԱՐՆՈՅԸ

Կոջար:

Բաշմուտ, 20 Յուլիս 1891:

Ի նրկ բլուրներով պատած Տփղիսն իր ձորամիջին դիրքովն ամարուան համար հաճելի բնակավայր մի չի ներկայանար: Օդի ջերմութիւնն արեւի մէջ երբեմն Ռէօմիւրի 35 աստիճանին կը հասնի: Այս անտանելի շոգէն աղատելու համար, Տփղիսեցիք, (կարողութիւն եւ հնարաւորութիւն ունեցողները, կ'ենթադրուի) Յունիսէն սկսեալ կը ցրուին ամարանոցներն եւ հանքային ջրերու աղբիւրները, որոնց թիւը շատ աննշան չէ Կաւկասիոյ մէջ: Բորժոմ, Աբաստուման, Պիատիգորսկ, Էսսէնտուկ, Կիտրովոզսկ՝ գեղազուարճ ամարանոցներ են, ուր միեւնոյն ժամանակ ընտիր եւ առողջարար, զանազան հանքային նիւթոց բովանդակութեամբ տաք ջրեր կան, որոնք բժշկականութեան մէջ բոլորովին անյարգ չեն: — Բայց այս վայրերն, իրենց հեռուաւորութեան պատճառաւ (1 միւնչեւ 3 օր) այնչափ յարմար չեն, մանաւանդ, որ շատ անգամ որոշ ախտերու եւ հիւանդութեանց տէր մարդիկ միայն կ'երթան այդ ջերմութիւնները լուացուելու եւ բուժուելու: Բայց Տփղիսեցիք, նորա, որոնք ամառնային տօթէն խոյս տալու համար է որ իրենց նոր բնակավայր կ'ընտրեն, եւ մանաւանդ այնպիսիք, որոնք չեն կրնար կամ չեն ուզեր իրենց գործերը Լքանել, — ունին ուրիշ ամարանոց մի, քաղաքէն ընդ ամէնը 18 վերստ (19 քիլոմէտր) հեռուաւորութեամբ: Այս ամառնոցը՝ Կոջարն է, ուր ես առիթ ունեցայ 2 օր մնալու եւ կ'ուզեմ ներկայ յօդուածովս ծանօթացնել Հանրէս Աստուծոյ ընթացողին:

Տփղիսէն գրեթէ 2 ժամ հեռու, ընդարձակ բարձրաւանդակի վրայ, զառ ի վայր դիրքով տարածուած է Կոջար: Արքունի ճանապարհը քաղաքէն դէպ ի վեր հետզհետէ կորմաններով (zig-zags) կը բարձրանայ եւ զուրկ չէ բոլորովին յարմարութիւններէ: Միայն թէ քաղաքէն